ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի փոխնախագահ Վոլֆգանգ Թիրզեի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները առաջընթաց եւ զարգացում են ապրում՝ բարի արգասիքներ բերելով երկու ժողովուրդներին: Նորին Սրբությունը նշեց, որ միջխորհրդարանական հարաբերությունների սերտացումը կնպաստի տարածաշրջանային խնդիրների առավել խորը ընկալմանը՝ զոհունակություն հայտնելով տարածաշրջանում խաղաղության կայունացմանն ու առկա խնդիրների խաղաղ կարգավորմանն ուղղվող ջանքերի համար:

Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը բերեց փոխնախագահ Վոլֆգանգ Թիրզեին՝ Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման գործում իր ունեցած կարեւոր ներդրման համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Քույր Եկեղեցիների կապերին ու համագործակցությանը, եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաեւ տարածաշրջանում առկա խնդիրների կարգավորման գործում հոգեւոր առաջնորդների դերակատարությանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Բունդեսթագի փոխնախագահը խոսեցին նաեւ ազգային ինքնության պահպանության գործում Եկեղեցու առաքելության մասին:

Հանդիպմանը ներկա էր Գերմանիայի հայոց թեմի փոխառաջնորդ Տ. Սերովբե վարդապետ Իսահակյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ